ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Բողոք առ Պողոն Բողոքոյս։

ԸՆՑԵԱԼՆԵՐԸ ձեռքս անցաւ Բրաբատեան Բրշալուսոյ 367 թիւը որ այս տարի յուլիսի 7ին հրատարակուած է, և տեսնալով ու կարդալով այն ոտանաւորը՝ որուն վերնագիրն է "Բողոք առ Դէոնանէ առային Սարբեարի", և ներքևն ալ ստորագրած Դ. Եպիս. Պէոպէոնեան գործակալ ազգային լրագրոյ, կրկին զարմանք ունեցայ. մէկ մը իմ ասկէ 21 և 25 տարի առաջ շինած երկու ոտանաւորներս քանի մը բառ փոփոխութեամբ և իրարու հագցընելով հրատարակուելուն վրայ, մէկ մ'ալ օտար տեր մը տեսնելուս իմ քնիկ և չծախուած ապրանքիս։ Ի՞նչ վախճանաւ, ի՞նչ համարձակութեամբ կամ ի՞նչ սխալմամբ աս յիրաւի զարմանաց արժանի դիպուածը եղեր է այսպիսի ուսմանց զարգացեալ ժամանակ մը, որ ամէնքը իրենց հանձարը ցուցընելու հետ են, և մուրողաբար գրեն ալ ամօթ կը համարուի՝ թող թէ գողաբարը, ես հասարակաց կը յանձնեմ քննելը. բայց իբրև տեր և պաշտպան իմ ստացուածքիս և հայր իմ մտքիս ծննդոցը՝ կը բողոքեմ արդարապէս և իմ հին Բողոքս կ'ուզեմ գերութենէն դարձընել. վասն զի իմ ոտանաւորիս վերնագիրն էր այսպէս, "Բողոք առ Նրասխ գետ, Բայլբանոնի", որ շիներ էի 1829 փետրուարի 25ին. իսկ մէկալ ոտանաւորս ալ ուսկից քանի մը տուն ասոր հետ խառնուեր են, շինած էի 1826ի հոկտեմբերի 13ին, որ իմ քերթուածներուս ալ առջինեկն էր այս վերնագրով "Պարոնք մարդոյ յոսկոյ և մահ նորա գաղմնելի, Նրգգ"։ Բայց երկուքն ալ հարկ կը սեպեմ հոս հրատարակել հանդերձ Դէոնանէ առային բողոքովը, որ իմացուի իմինս և իմն չեղածը։

Բայց կարելի է մէկն ըսէ, թէ դու քու անուամբդ բան չես հրատարակած, ուսկից կը ցուցընես թէ քու գրածդ է գաղափար այս նոր հրատարակածին։ Պատասխան կու տամ, թէ կամ հրաշքով պիտի եղած ըլլայ այս դիպուածը՝ որ 21 ու 25 տարի առաջ իմ մտքիս ու իմ գրչիս շարժմունքը այսօր նոր քերդողի մը վրայ եկեր է. և կամ՝ որ անտարակոյս է, թէպէտ ես տպագրութեամբ չեմ հրատարակած գրուածներս, բայց անոնց օրինակները կան շատ աշկերտներուս քով, որոնցմէ ոմանք քահանայ և վարդապետ են այս օրս, ոմանք ալ աշխարհիկք այս մայրաքաղաքիս մէջ, ուր ոմանք ալ դեռ ձեռքիս տակ աշակերտ են. որոնց մէկուն քովէն ելած պիտի ըլլայ վերոյիշեալ ոտանաւորներուս օրինակը, և Սարբեարի նկարագրողին ձեռքն հասած, որ այն ոտանաւորներուն ներքև Ա. Ս. գրերը տեսնալով, (որ է իմ սովորութիւն իբրև քերթողական անուն՝ Ա աղինակ Սիսակեան գնել) և թերևս չճանչնալով ալ թէ ո՞վ է աս Ա. Ս. քերթողը, կամ անտեր անծանօթ անձ մը կարծելով՝ ուզեր է նոր անուամբ մը յայտնել։ Բ. թէպէտ իմ այլաբանօրէն առ Նրասխ գրածս ջանացեր է յարմարցընելու Դէոնանէ առային, բայց անշուշտ չէ հասկրցած թէ ո՞վ է այն Նրասխ գետը, ո՞րն է այն Ընդաստանը, որուն ջուր տալ կը մաղթէի, զոր նոր քերդողը Փոփոխէ դարձուցեր է, ո՞րն են այն Մեր տնկոց արմատքն, զոր նոր քերդողը իրեն սեփականեր է, այսպէս մնացածներն ալ որ հոս կը տեսնաք. ուր աս ալ կը դիտէք որ նոր քերդողը հին գաղափարին հաւատարիմ մնալով՝ ուր որ զանիկայ օրինակեր է գրեթէ անփոփոխ՝ ոտանաւորին տան չորս տողերն ալ նոյնայանգ պահեր է, իսկ ուր որ քովէն շիներ կամ մէկալ ոտանաւորէն առեր է՝ հոն մոռցուեր և խառնուեր է չորս տողին նոյնայանգութիւնը։

Բողոք առ Լրաստ գեպ.

Բալաբանու�։

Որ 'ի Կարնոյ յաղաերականց
Ալիժեալ սահիս ականակիտ,
Կարկաջասահ փարեալ պատիս
Տոյ զԱ.ոյիւ գեղաժրպիտ,
Տրև Ծաղկեոյ անդաստանաց
Փրթթին մարմանդք ծիծաղախիտ,
Բասէնք, Շիրակ, Ալաղարշապատ
Տրև ուռճանան և Կոգովիտ.
Հիւրամեծար Ալինեաց մանկանց
Օանմահութեան տաս ընկեկտար,
Ինձրևաձին արբուցանես
Բրծաթափայլ յամպոց տիպար,
Օանդս ոսկեթել զերկիր խոպան
Լա ընմայրիս առատաբար.
Ինդաստանիս յիմ զբլանաս
Պտէթ բաժակաւ տալ ջուր յօժար։
Ամոիայ հեռի 'ի քէն
Պարագայիւք զերդ բիւր մրդն,
Հոտոտեցան 'ի յորդ ալեաց
Խիտ ծառատունկք նորա ըզգօն։
Բրևակէզ թէ և 'ի տօթ
Ջերանիցի երկիրս անթօն,
Արդարտահատ զալեաց ցընցուղ
Ցանգ ագահես յառնել ինձ տօն։
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Բողոք առ Վրէսոնանէ սուրէն

Արբեարի։

Արբեարին յաղաերականց
Ալիժեալ սահիս ականակիտ,
Կարկաջասահ պատեալ փարիս
Բղպարտիզաք գեղաժրպիտ։
Տրև ծաղկահոտ անդաստանաց
Փրթթին մարմանդք ծիծաղախիտ,
Լա դալարիք անուշահամք
Պտուղք և միրգք քո բազմախիտ,
Հիւրամեծար դու ախտաբոյժ
Օանմահութեան տաս ընկեկտար.
Ինձրևաձին արբուցանես
Բրծաթափայլ յամպոց տիպար։
Օանդս ոսկեթել առոգանես
Լա ընմայրիս առատաբար,
Փափագողիս էր ղլանաս
Պէթ բաժակաւ տալ ջուր յօժար։
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
Բրևակէզ 'ի տապ 'ի տօթ
Ջեռանի իմ սիրտս անմուէր,
Արդարտահատ զալեաց ցնցուղ
Լոր ագահես տալ ինձ նուէր։
Պանծայ փառաք քո ընդ աջմէ
Բմարանոյ Պէօյիւք տերէ։
Օդ բարեխառն առ ծովեզրին
Բզսիւգ քաղցրիկ 'ի գով շնչէ։
Պայծառ արև առաւօտու
Շող ալձակէ ձառանչագեղ,
Լա մանրագոյն ալիք ծովու
Խաղան յեզերս նշուլագեղ։
Փուչունք յեթերս լուսաթրուիչ
Խաղաղութեան լուր գուշակեն.
Սաւառնաթև և 'ի կրուիչ
Յօդ և 'ի ծով լուղան ձախրեն։
Բոյլք աստեղայ Լրեբոսին
Լուսացնցուղ քեզ շողշողեն.
Լա մինչ յերկնից Փեբոս ծագէ,
Ի նեղուցէդ զեփիւռք շնչեն։
Ի Պոնտոսէն նաւք փութորկեալք
Տրեզ հասանեն իբր ապաստան
Լա առաջի մեծի դաշտիդ

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Միրաբողբոջ դարձիր աղէ
Աբբա ըզմեր տընկոց արմատ,
Պատղինաւէտ քեւ ուռճասցին
Աղարթախիտ ճիղք անհաստատ։
Դեր ըզՏէմպէ, զոր Մէնէսեայ
Աբբուցանէ մեծ հեղեղատ,
Դան զԱզկայիր, զոր Լիւզոսին
Դետ ողողէ վիժակ անհատ։

1829 փետրուար 25։

Վ. Ս.

Զգեն խարիսխս անշարժական։
Աբրամազդայ տաճարն ահեղ
Երկնածրար հսկայն Աէռօս
Ի հանդիպոյ քեզ հայեցեալ
Ողջունաբեր տայ քեզ իրախոյս։
Ի հիւսիսոյ ընչեն ուժգին
Մերթ Բօրէաս և մերթ Եւրոս,
Նալածական դարձուցանեն
Ըզտաղտակալին քո ըՀՆօտոս։
Միրաբողբոջ դարձիր աղէ
Աբբա և զիմ տնկոյս արմատ,
Պտղինաւէտ քեւ ուռճասցի
Աղարթախիտ ճիւղս անհաստատ։
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Ի Կոստանդնուպոլիս, 'ի 10 յունիսի 1850։

Մեսրոպ Պէրպէռեան
Գործակալ ազգային Լրագրոյ։

Պարանի մարդոյ յոսկոյ և մահ նորա բնութիւն։

ԵՐԳ

Ընդ կարմրագոյն և խաքուսիկ
Յառեալ ընդ գեղ ոսկւոյն մարդկան,
Կործանեցան նովաւ ազինք
Ի ցանկութիւն կուտել 'ի տան։
Օ՛ի ոմն երթայ յածի ընդ ծով
Յամնք գետին անհետ ասէ,
Ընդ Ազկայիր անցանելով
Ի Պարս յՈրմա զոտսըն դնէ.
Ի ինձ ասէ աստ մարգարիտ
Օ՛այն ժողովել գանձիւ սակաւ.
Ելեցուկ մարմնոյս որ կորուփիտ
Լիցի ինձ այն ժամանակաւ։
Ել 'ի դարձին զահ մրրկին,
Զազանացեալ ալեաց ծովուն
Երկարելով միշտ առաջին
Օ՛Աղկիոնին դիտէ ըզձուն.
Ել դու ինձ ով Էոնեան
Լեառն երկնաբերձ հովանաւոր,
Սուրբ Մուսայից հանդիսարան,
Շ՛ընչեա ըզսիւգդ յերգ պարաւոր։
Պայծառ արև առաւօտու
Շ՛ող արձակէ ճաճանչագեղ,
Ի՛ մանրագոյն ալիք ծովու
Խաղան յեզերս նրշուլագեղ։
Ծրոչունք յեթերս լուսաթռիչ
Խաղաղութեան լուր գուշակեն,
Սաւառնաթև և 'ի կրուիչ
Յայերս ու 'ի ծով լուզան ճախրեն։
Ել 'ի չու խաղաղութեամբ
Խաղայ գլնայ 'ի շունչ հեզիկ,
Ի՛ վեհն աւուր քողարկութեամբ
Ուրոյ լուսոյն՝ զոզէ մընչիկ։
Բոլք աստեղաց ըզնովաւ բակ
Ելեալ յայնժամ ակնարկեին,
Ողբ մարդկան նոյն օրինակ
Մի երկընչիր նմա ասէին։
Ելդ և Յնդոս նաւդ հասանէ,
Դեզ ապաստան լիցի և նա,
Յայնժամ յերկնից հրսկայն ծագէ
Ու 'ի հանդիպոյ զեփիւռն գայ։
Լթերական լուծեալ շոգիք
Պինդ թանձրանան յամպ բազմախիտ,

Լրտընդոստ վառեալ ոգիք
Շանթս արձակին մարդոյն 'ի սիրտ։
Ի՜հ և զըմբաղ արագ արագ,
Լրբ ըզձայթմունս և ըզբոմբիւն
Լուաւ զերդ սաստ աստուածառաք,
Նկն յիւր վերայ և լայ լալիւն.
"Օ՜աչացըս գեղ, ո՛վ թըխպագին
Մարդոգք սաստիկք կուրացուցիք,
Ղուք լեռնացեալ կոհակք ուժգին,
Մի՛ զիս առնէք վաղամեռիկ,,։
Լու նաւաստիք բարձեալ ըզձայն
Կորեաք կորեաք աղաղակեն.
Շանթակոտոր խորտակեցան
Կայմք և տախտակ, 'ի ջուրս լուղեն։
Ծաւալեալը յերկիր անկաւ
Յորժամ լըսաւ ըզգոյժն անդէպ.
"Ղուտէր Աստուած, խիստ է յիս ցաւ,
Հաս ինձ յօգնան հիգիս հապճեպ։
Ի զշունչս ևեթ ընչից փոխան
Ի քէն հայցեմ պահեա 'ի յիս,,։
Լու զայս ասաց հեկեկաձայն,
Զմաղձ սըրտին ժայթքեաց յալիս։
Լու փրփրադէզ կուտակեցան
Կապուտագոյն ծովու ալիք,
Լու իբր առիւծ յարձակեցան
Սարսափածին հողմով սաստիկ։
Ընդ իբր հեղեղք ծովք զայրացեալ
Կոհակ կոհակ 'ի նաւն հեղան,
Լու մարդն յայնժամ յինչս հայեցեալ
Ըստասուելով յոգւոց եհան։

"Ո՜հ, զի՞արդ մահ անագորոյն
Ընդէ՞ր ումեք չառնես ինչ շահ.
Ո՞վ անուշակ ձեր տեսուածոյն
Մանկիկք քաղցրիկ կարօտացայ։
Ընչագ փափաքս իմ առ ոսկին
Օ՜այս ինձ հատոյց տոյժ դառն և խիստ,
Ընդ մարգարտոյ՝ աստ ցաւագին
Մահ դըժնդակ կըթոտ 'ի զիստ։
Օ՜այս տամ խրատ ամենեցուն
Մի՛ վան ոսկւոյ յածիլ ընդ ծով,
Այլ զոր բաժին բաղդն ետ նոցուն
Ի՜նել նովաւ հաճոյ և գով,,։
Ընդ սեպացեալ ալիք ուժգին
Լցհար ըզնաւն յետին բախմամբ,
Ի Կոկիւտոս գետ ողբագին
Թօթափեցան միով ցասմամբ։
Ա՜յսպէս լեցի այն ագահի,
Որ ոչ ասէ այսչափ ինձ բաւ։
Կամ ծովակուր կորընչեցի
Կամ գազանաց 'ի ժանիս բնաւ։

1826 Հոկտեմբեր 13։ Վ. Ս։

Հոս իբրև հարկ կը սեպեմ դնելու մէկ կարճ խրատական ոտանաւորս ալ՝ որ 1826ի շիներ էի բանագող գրողի մը վրայ, որովհետև ասոր հրատարակելն ալ առանց հակառակութեան ինծի թողուած է, յարմար ատենն ընծայելով.

Ալ՝ ան ոչ մոռացածոյ գրողին նորոյս համբակաց։

Օ՜ՏԱՐԻՆ փետրովք որչափ պաճուճեալ խոյասցիս յեթերս,
Լըշմարին բացուստ կորովի աչաց՝ գողանի փետուրք.
Լթէ կապտեսցիս որով պըճնեցար՝ մերկանդամ բազկօք
Ոնարհեալ յերկիր՝ ագռաւոյն դիպաց պատահիս 'ի դէպ։
Ի բացեայ 'ի քէն շռայլ ածականաց ջոլիր խիտ առ խիտ,
Ղրանոր բառից շեղջակոյտ անլուր և ոչ իրթնագոյն.
Ի խաւար մընթին հարկանել ըզթեւս արշաւել յայերս՝
Մի՛ այդպէս ճեպիր, թէ բընիկ փետրովք թըռանել կամիս.
Ըրբահեր թեւոց ընտանի դադարք՝ են թուփք և մացառք,
Այց, մինչ աճեսցին փետուրք զերդ արծուին, թըռիր բաց են օդք.
Այլ մի՛ հուպ արփւոյն, զի մի՛ այրեսցիս։

1826 Նոյեմբերի 6. Վ. Ս.

Այս Բողոքիս պատճառը վերը յայտնած ըլլալով, չեմ կարծեր որ մէկը տարակուսի մեր բարեմտութեանը վրայ, և ոչ մէկն ալ դժարի մեր իրաւացութեանը վրայ, որ գուցէ ժամանակաւ ուրիշ մը մեր գրուածքները հրատարակելու ատեն՝ աւելի անաչառութեամբ քանեցընէր։

Կոստանդնուպոլիս 9 Հոկտեմբեր 1850։

Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ԶԷՄՊԷՐԻԿ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ծխախոտ և ընչաղէղ։ — Համաճարակ և գոլոսդրական հիւանդութիւններ։

Ռ. Ծխախոտ և ընչաղէղ կամ քնախոտ։ — Սուրիշ անգամ առիթը եկած ատենը հասկրցուցեր ենք, թէ որչափ գէշ բաներ են աւելորդ սովորութիւնները, որոնց համար պէտք է այնպիսի ծախքեր ընել, որ աւելի գովելի բանի մը համար կրնային ըլլալ։ Մէն բանէ աւելի կերակրոյ չափազանցութեան վրայ ուշադրելուկ բաներու ընդունայնութեանը վրայ երկայն բարակ խօսեցայ. իսկ այսօր ծխախոտի սովորութեանը վրայ խօսինք, սովորութիւն մը որ մեր օրերը ամէն տեղ տարածուեր է, ու ամենևին օգուտ չունի։

Ծխախոտը գտան Սպանիացիք 1560 ատենները Մերիկայի Նուքաթան ըսուած երկրին մէջ, ու հետերնին առին Սպանիա ու Պորթուկալ բերին, Խսպանայէն ալ Պաղլիոյ դեսպանը Յովհաննէս՝ Նիքոթ կամ Նիրոյ Պաղլիա բերաւ ու հոն սկսաւ մշակել։ Նօթը տեսակ է ծխախոտը. լաւցընելու ու աւելի ախորժելի ընելու համար մէջը կը դնեն Թանթրուենի, յանգար[1], մուշկ[2], մեխակ, վանիլիա, կինամոն, և այլն։ Պոյն ալ կու տան ծխախոտին խահուէի գիրտովը՝ և ընկուզենիի տերևով։ Ռանակը շատցընելու համար ալ մէջը ածան նիւթեր կը խառնեն որ իրաւցընէ մէյմէկ թոյն են, ինչպէս կապար, պղինձ, ծարրաքար[3], ոքսիտ կամ ժանգ, ափիոն, սև եղեռորոս[3], և՛ն։

Պարձեալ կ'ըսեմ, թէ բան մը չկայ ասանկ անօգուտ ու այսչափ գործածական ինչպէս ծխախոտը, որ ամէն տեղ կը քաշեն, և ընչաղէղը կամ քթախոտը որ քիթով կը քաշեն։ Նրբոր մէկը ասոնց վարժի, անանկ հարկաւոր բաներ կը դառնան իրեն, որ աւելի կ'ուզէ հացը պակսի քան թէ ծխախոտը կամ քթախոտը։ Նու մէյմը որ մէկը վարժեր է՝ շատ զգուշութեամբ պէտք է թողու, վասն զի յանկարծ ասոնցմէ կտրուիլը կրնայ շատ հիւանդութեանց պատճառ ըլլալ։

Նրբոր մարդ վարժած չէ քթախոտի, քաշելու որ ըլլայ՝ կը փռնգտայ, գլուխը կը դառնայ ու ինչուան կրնայ կաթուածէ զարնուիլ։ Նրկար ատեն վարժելով՝ հոտոտելեաց զգացողութիւնը կը բթանայ, ու քաշողը ալ չի փռնգըտար։ Քթախոտ քաշողներուն վրայէն միշտ անախորժ հոտ մը կ'ելլայ, որչափ ալ մաքրասէր ըլլան։

Ծխախոտը առջի բերան դլխու պըտոյտ կու տայ, մարդուս՝ վրան մարմրուք կը բերէ, տաքութիւն, դող, պաղ քրտինք մը, սրտի խառնուք ու թմրութիւն։ Դերնին կակուղ մաշկն ու լորձունք հանող խոյլերը կը գրգռէ, ու անդադար թուք դուրս կու տայ, որով մարսողութիւնը կը դժուարի։ Մակեց յայտնի կ'երևնայ որ ծխախոտ քաշելը ՀԱՍԱԿԱՐ սովորութիւն է։ Մակայն ցուրտ ու խոնաւ երկրի բնակիչքը և թոյլ ու մեղկ կազմուածք ունեցող մարդիկ կրնան քաշել առանց վնասի։ Շատ մարդիկ կան որ չարաչար ծխախոտ քաշելով՝ խելքերնին կորսընցուցեր ապուշ դարձեր են։ Նրկու եղբարք, մէկը 17 ու մէկալը 18 սիկար ետևէ իրմէ քաշել-

1 ՏՀ. Ամբեր։ 2 ՏՀ. Միս։

1 ՏՀ. Թէլքէ։ 3 ՏՀ. Պոյնոյ օրոս։
2 ՏՀ. Ըրոսիքի Բաշը։